



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2017 թ. ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ ԼՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱԶՈՐ

2017

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Ամփոփ նկարագիր

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2017 թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մահացությունների վերաբերյալ տվյալները հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով եւ պաշտոնական աղբյուրներով տարածված, ինչպես նաև մահացած զինծառայողների հարազատների կողմից տրամադրված տեղեկություններից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 2017 թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում մահացել է **46** զինծառայող: 46 զինծառայողներից 29-ը ժամկետային զինծառայողներ են, 17-ը՝ պայմանագրային: Արձանագրված մահվան դեպքերից 17-ը տեղի են ունեցել ՀՀ-ում, իսկ 29-ը՝ ԼՂ-ում:

Մահացության 46 դեպքից **21-ը** հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով են, **6-ը**՝ սպանության (5-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտում, 1-ը՝ դիտվորյալ սպանություն), **6-ը**՝ դժբախտ պատահարների (4-ը ավտովթար, 1-ը թունավորում, իսկ 1-ը որակվել է ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք, որն անզգուշությամբ առաջացրել է մահ), **9-ը**՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու և **4-ը**՝ առողջական:

Նշված 46 դեպքերից 44-ի վերաբերյալ տրվել են պաշտոնական հաղորդագրություններ, մյուս 2 դեպքերի վերաբերյալ տեղեկություններ տրվել են միայն ՁԼՄ-ներով: Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր հանդիսացել են ՀՀ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքը¹ (4 դեպքով), ԼՂ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքը² (30 դեպքով), ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքը³ (6 դեպքով), մնացած դեպքերում ՁԼՄ-ները (6 դեպքով):

Արձանագրված 46 դեպքերից 39-ի դեպքում զինծառայողները գտնվել են ծառայության մեջ, 4-ի դեպքում զինծառայողների մահացությունները տեղի են ունեցել Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում բուժման ընթացքում, 1 դեպքը տեղի է ունեցել ծառայությունից դուրս՝ անձնական հարցերի շուրջ ծագած վեճի արդյունքում (դեպքի ժամանակ մահացած զինծառայողը գտնվել է աշխատանքից դուրս), 1-ը՝ զինծառայողը ինքնակամ լքել է զորամասը և ինքնասպանություն գործել, իսկ 1-ի դեպքը տեղի է ունեցել աշխատանքի գնալու ճանապարհին:

Հարկ է նշել, որ վերոնշյալ 29 ժամկետային զինծառայողներից 2-ի մահվան դեպքը տեղի է ունեցել զորակոչվելուց մինչև 3 ամիս ժամանակահատվածում, 5-ի դեպքը՝ մինչև 1 տարի ժամանակահատվածում, իսկ 16-ը՝ մեկ տարի եւ ավելի ժամանակ անց: 6 մահացած ժամկետային զինծառայողների վերաբերյալ առայժմ չկան տեղեկություններ, թե որքան ժամանակ են եղել զինվորական ծառայության մեջ:

2017 թ-ի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 21 մահացության դեպքերից 1-ը տեղի են ունեցել ՀՀ-ում

¹ <http://www.mil.am/>

² <http://nkrmil.am/>

³ <http://investigative.am/military-investigation/military-newsfeed.html>

(Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում, սակայն վիրավորվել է ԼԴ-ում) ,
մյուս 20-ը ԼԴ-ում:


2016թ-ի նույն ժամանակահատվածում՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է 146 դեպք, որից 77-ը՝ ապրիլի 1- 5-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած պատերազմական գործողությունների հետևանքով են, իսկ մահացության մյուս 69 դեպքերից 28-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 15-ը՝ դժբախտ պատահարի (5-ը՝ ավտովթարի, 3-ը՝ բնական աղետի/1-ը՝ ձնահոսքի, 2-ը՝ ջրհեղեղի/, 2-ը՝ բլինդաժի փլուզման, 2-ը՝ մեքենաներ վարելու, շահագործելու կանոնների խախտման, 1-ը՝ հոսանքահարման, 1-ը՝ ջրահեղձման, 1-ը՝ ականի պայթյունի), 12-ը՝ սպանության (5-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների, 3-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտումների հետևանքով, 3-ը՝ դեռևս չհատակեցված հանգամանքներում, 1-ը՝ դիտավորյալ), 10-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով, 3-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով և 1-ը՝ առողջական խնդիրների՝ սրտի կաթվածի հետևանքով:

Նշենք, որ 2016 թ-ի համեմատ՝ 2017 թ-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերը նվազել են 7-ով, դժբախտ պատահարների հետևանքով մահվան դեպքերը նվազել են 9-ով, սպանության դեպքերը նվազել են կրկնակի անգամ, ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու պատճառով մահվան դեպքերը նվազել են 1-ով: Միեւնույն ժամանակ, առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքերը աճել են 3-ով:

2017 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտումների եւ դրանց հետևանքով մահացության դեպքերի, կիրառված զենքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները և նկարագրությունը

Գծապատկեր 1-ը ներկայացնում է հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը՝ 2017 թվականի առաջին 9 ամիսների համար:

Գծապատկեր 1. 2017 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը և հրադադարի ռեժիմի խախտումների թիվը



Աղյուսակ 1-ում ներկայացվում է 2017 թ. առաջին 9 ամիսների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտումների և արձակված կրակոցների վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 1. 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում գրանցված հրադադարի ռեժիմի խախտման և հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձակված կրակոցների թիվն ըստ ամիսների

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտումների թիվը	Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձակված կրակոցների թիվը
Հունվար	1201	14810
Փետրվար	1383	19845
Մարտ	1253	17500
Ապրիլ	1146	15870
Մայիս	1740	24680
Հունիս	1550	-
Հուլիս	1180	-
Օգոստոս	910	9700
Սեպտեմբեր	-	≈7000
Ընդամենը	10363	109405

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ամենամյա ուսումնասիրությունների արդյունքում հրապարակվել են դարաբաղաադրբեջանական և հայ-ադրբեջանական

հակամարտ զորքերի շփման գծում արձանագրված հրադադարի ռեժիմի խախտման թվերը, սակայն 2016թ-ի համար հրապարակվել են միայն կրակոցների թվերը, իսկ արդեն 2017թ-ի հունվարից մինչև մայիս սկսեցին հրապարակվել նաև հրադադարի ռեժիմի խախտման թվերը: Այնուամենայնիվ, 2017թ-ի հունիս և հուլիս ամիսներին հրապարակվել է միայն հրադադարի ռեժիմի խախտման թվերը, իսկ սեպտեմբերին հրապարակվել է միայն հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձակված կրակոցների թիվը:

Աղյուսակ 2. 2016 - 2017 թթ.- ի 9 ամիսների ընթացքում հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները և դրանց կիրառման քանակը

Հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները				
	Զինատեսակի կիրառման քանակը 2016 թ. հունվար-սեպտեմբեր	Կիրառված արկերի քանակը 2016 թ. հունվար-սեպտեմբեր	Զինատեսակի կիրառման քանակը 2017 թ. հունվար-սեպտեմբեր	Կիրառված արկերի քանակը 2017 թ. հունվար-սեպտեմբեր
Նռնականետեր	56	497	31	207
ՌՊԳ-7	15	37 արկ	6	17 արկ
ՀԱՆ-17	31	388 արկ	12	76 արկ
ԳՊ-25	2	7 արկ	-	-
ՀՀՆ-9	4	6 արկ	2	1 արկ
ՁՀՆ-7	-	-	2	2 արկ
Դ-44	-	-	1	Հայտնի չէ
Հաստոցավոր-ավտոմատ	2	57 արկ	-	-
Հաստոցավոր-հակատանկային	-	-	8	111 արկ
Ձեռքի-հակատանկային	2	2 արկ	-	-
Ականանետեր (հրետանի)	68	1091	67	831
60 մմ-ոց	36	367 արկ	29	184 արկ
60 և 82 մմ-ոց	6	113 արկ	23	462 արկ
60, 82 և 120 մմ – ոց	2	Հայտնի չէ	2	21 արկ
82 մմ-ոց	23	606 արկ	12	70 արկ
120 մմ-ոց	1	5 արկ	2	94 արկ
Հրաձգային զինատեսակներ	4		6	
ԱԿ	1	հայտնի չէ	-	-
ՄՎԴ	1	հայտնի չէ	2	Հայտնի չէ
«Սև նետ»	-	-	1	Հայտնի չէ
Իստիգլալ	1	հայտնի չէ	3	Հայտնի չէ
ԴՇԿ	1	հայտնի չէ	-	-

Ռեակտիվ հրթիռահրետանային կայանք	14	1183	3	5
TR-107	2	49 արկ	2	5 արկ
TR-107 և ՄՄ21	1	270 արկ	-	-
ՄՄ21	2	572 արկ	-	-
Ջենիթային համակարգ՝ ՋՈւ-23-2	5	257 արկ	-	-
Ջենիթահրթիռային համայիր՝ 9Մ33 Մ3	1	Հայտնի չէ	-	-
Հետևակի մարտական մեքենա ՀՄՄ	1	34 արկ	-	-
Հակատանկային կառավարվող հրթիռ SPIKE	1	1 արկ	1	Հայտնի չէ
Թնդանոթներ 85, 100, 122, 152 մմ տրամաչափի	1	Հայտնի չէ	-	-

2016 և 2017 թթ. առաջին 9 ամիսների ընթացքում կիրառված զենքերի տեսակներից և կիրառված արկերի քանակից երևում է, որ 2016թ-ի ապրիլյան պատերազմական գործողությունների ընթացքում կիրառված զինատեսակների և կիրառված արկերի քանակը կտրուկ աճել է: 2016թ-ի առաջին 9 ամիսների ընթացքում կիրառվել է ռեակտիվ հրթիռահրետանային կայանք՝ հիմնականում ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ: Ընդհանուր պատկերից կարող ենք տեսնել, որ 2017թ-ի առաջին 9 ամիսների համեմատ 2016թ-ի առաջին 9 ամիսներին ամենից շատ կիրառվում են 60 և 82 մմ-անոց ականանետերը եւ ՌՊԳ-7, ՀԱՆ-17, ՀՀՆ-9 տեսակի նոնականետերը: Իսկ որոշ զինատեսակներ 2017թ-ի առաջին կիսամյակում ընդհանրապես չեն կիրառվել: Շատ հաճախ ԼՂ ՊԲ պաշտոնական կայքէջը հրապարակել է կիրառված զինատեսակը, սակայն ոչ միշտ է հրապարակել կիրառված արկերի քանակի մասին տեղեկությունները: Հարկ է նշել, որ 2017թ-ի հուլիս-սեպտեմբեր ամիսներին ԼՂ ՊԲ պաշտոնական կայքէջը գրեթե չի հրապարակել կիրառված զինատեսակները: Հրապարակվել են միայն 60, 82 և 120 մմ-անոց ականանետերից արձակված կրակոցները և նշվում է, որ կիրառվել է հաստոցավոր ավտոմատ նոնականետ և տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, սակայն չի նշվում կիրառված արկերի քանակը:

2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մահացության դեպքերով հարուցված քրեական գործերը

2017 թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում, ըստ Զինվորական քննչական գլխավոր վարչության հրապարակումների 38 մահացության դեպքերով հարուցվել են քրեական գործեր՝ ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով.

- 15-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:
- 8-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով, սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:
- 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերի հատկանիշներով՝ սպանություն, որն առաջացրել է 2 և ավելի մարդու մահ, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:
- 4-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով, զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, սպանություն:
- 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մասով, մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ:
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով, անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ:
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով, Չենքի հետ վարվելու կանոնները խախտելը:
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, ապորինաբար մեկ ուրիշին դիտավորյալ կյանքից զրկելը:
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով, մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Մահացության մյուս 8 դեպքերից 3-ի առնչությամբ, որոնք վերաբերում են առողջական խնդիրների հետեւանքով մահացություններին եւ 3-ի առնչությամբ, որոնք վերաբերում են հրադադարի հետեւանքով մահացություններին, առկա չէ տեղեկատվություն, թե արդյոք հարուցվել են քրեական գործեր: 1 մահացության դեպքի առնչությամբ, որը կրկին վերաբերում է առողջական խնդիրների հետեւանքով մահացությանը, առկա է տեղեկատվություն քրեական գործ հարուցելու մասին, սակայն նշված չէ, թե ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով է այն հարուցվել: Իսկ 1 մահացության դեպքի առնչությամբ ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում տարածված հայտարարության համաձայն՝ երկրորդ կայագորային քննչական բաժնում քննություն է տարվում, սակայն կրկին նշված չէ, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով: Վերոնշյալ գործերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար 2017թ. սեպտեմբերի 8-ին Կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ, ՀՀ Դատախազություն և ՀՀ Քննչական կոմիտե, ըստ կոնկրետ անձանց մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործեր հարուցվելու մասին: Ի պատասխան Կազմակերպության գրության՝ ՀՀ գլխավոր

դատախազությունը 2017թ. սեպտեմբերի 20-ին հայտնել է ընդհանուր տեղեկություններ մահվան դեպքերի վերաբերյալ: Ըստ ՀՀ Դատախազության տվյալների՝ 37 զինձառայողների մահվան դեպքերով հարուցվել է 33 քրեական գործ, որոնցից 4-ը 4 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացություններով ուղարկվել են դատարաններ, մեկով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով(Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ բացակայում է հանցագործության դեպքը), 4-ով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով(Քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե՝ գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետազոտ վարույթին), մյուս 28 անձանց մահվան դեպքով 24 քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է: Եւս 5 մահվան դեպքերով հարուցվել են քրեական գործեր, որոնցից 3-ի վարույթները կասեցվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով(Քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե՝ գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետազոտ վարույթին), 2-ի նախաքննությունը շարունակվում է: Մեկ զինձառայողի մահվան դեպքով նյութերի նախապատրաստումն ընթացքի մեջ է: 2 զինձառայողի մահվան դեպքի մասին տեղեկացրել են, որ նրանցից մեկի մահը կապված չէ ձառայողական պարտականությունները կատարելու հետ, իսկ մյուսը գորացրված է եղել զինված ուժերից:

Հարկ է նշել, որ Կազմակերպությունը վերստին դիմելու է նշված տեղեկությունները ըստ կոնկրետ անձանց ստանալու համար:

Ի պատասխան Կազմակերպության՝ 2017թ-ի սեպտեմբերի 8-ի գրության՝ ՀՀ Քննչական կոմիտեն 2017թ-ի սեպտեմբերի 25-ին տրամադրել է տեղեկություն ըստ կոնկրետ անձանց (տե՛ս աղյուսակ 4): Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հայտնած տվյալների՝ 4 մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննությունն ավարտվել է, և քրեական գործերը մեղադրական եզրակացություններով ուղարկվել են դատարան: 1 մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է, 4 մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի վարույթը կասեցվել է, 28 մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է, 2 մահվան դեպքի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում նյութեր չեն ստացվել, 3 մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննությունը կասեցվել է, 2-ի մասով նախաքննությունը շարունակվում է: Մեկ մահվան դեպքի առթիվ նյութերը նախապատրաստվում են:


2017 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մահացության դեպքերի վիճակագրական տվյալները և նկարագրությունը

2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մահացած 45 զինծառայողներից 17-ը պայմանագրային զինծառայողներ են, 28-ը՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ:

Ինչպես նշեցինք, 46 մահվան փաստերի 43-ի դեպքում առկա է պաշտոնական հաղորդագրություն, տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր հանդիսացել են ՀՀ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքը⁴(4 դեպք), ԼՂ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքը⁵ (30 դեպք), ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքը⁶ (6 դեպք), մյուս դեպքերում նաև ՁԼՄ-ներ(6 դեպք):

Մահացության դեպքերից 17-ը տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 29-ը՝ Լեռնային Ղարաբաղի (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՀՀ և ԼՂ տարածքում գրանցված մահվան դեպքեր



Ստորև ներկայացվում են 2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համար մահացության դեպքերի վիճակագրական տվյալները՝ ըստ պատճառների (տե՛ս աղյուսակ 3 և գծապատկեր 3), դեպքերի ամփոփ տեղեկատվությունը (տե՛ս աղյուսակ 4) և մահվան հանգամանքների վերաբերյալ առկա տվյալները:

⁴ <http://www.mil.am/>


⁵ <http://nkrmil.am/>

⁶ <http://investigative.am/military-investigation/military-newsfeed.html>

Աղյուսակ 3. ՀՀ զինված ուժերում եւ ԼՂ պաշտպանության բանակում 2017 թ-ին մահացության դեպքերի վիճակագրությունը ըստ պատճառների ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության տվյալներով

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում	Ինքնասպանություն/ հասցնել	Սպանություն		Դժբախտ պատահար			Առողջական խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը
			Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Դիտավորյալ	Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ	Ավտովթար	Թունավորում շմոր գազից			
Հունվար	3	1	1	0	0	0	0	1	7	6
Փետրվար	2	1	0	0	1	1	1	0	6	6
Մարտ	3	0	1	0	0	0	0	0	3	4
Ապրիլ	2	1	1	0	0	0	0	1	5	5
Մայիս	2	2	1	0	0	3	0	0	6	8
Հունիս	4	1	0	0	0	0	0	2	5	7
Հուլիս	1	1	1	0	0	0	0	0	3	3
Օգոստոս	2	2	0	1	0	0	0	0	5	5
Սեպտեմբեր	2	0	0	0	0	0	0	0	2	2
Ընդամենը	21	9	5	1	1	4	1	4	42⁷	46

Գծապատկեր 3. 2017թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում մահացությունների պատճառները



⁷ Ավտովթարի հետեւանքով գրանցված 3 զինծառայողի մահը եւ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով գրանցված 3 զինծառայողի մահը տեղի է ունեցել մեկական միջադեպերի արդյունքում:

Աղյուսակ 4. Մահացության դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն

Հ/Հ	Անուն Ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարած աշրջան	Դեպքի վայրը (քաղաք, գյուղ, հոսպիտալ, ճանապարհահատված...)/ ասկայության դեպքում՝ մահվան վայրը (հոսպիտալ ...)	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմին	ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1	Գարիկ Արտաշեսի Վարդանյան	15.01.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ	ԼՂ ՊԲ	1-ին կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում/ զինծառայողը վիրավորվել է 2016 թ-ի դեկտեմբերի 30-ին	Նախաքննություն
2	Արայիկ Իգորի Մարգարյան	16.01.2017	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	2-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Մպանություն/ զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Դատաքննություն
3	Անդրանիկ Սմբատի Մուսիկյան	18.01.2017	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	2-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Վարույթը կասեցվել է

								սպանություն կատարելը		
4	Կարեն Մարատի Ուլուբաբյան	22.01.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ		ՀՀ քրեական օրենսգրքի 104- րդ հոդվածի 2- րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննու թյունը կասեցվել է
5	Շավարշ Հակոբի Գալստյան	25.01.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրք	ՀՀ Քննչական կոմիտե	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քրեական օրենսգրքի 110- րդ հոդվածի 1- ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպա նություն	Նախաքննու թյուն
6	Մարգիս Սամվելի Ափինյան	26.01.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամաս	ՀՀ ՊՆ	ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժին			Առողջական	Նախաքննու թյուն
7	Գոռ Համազասպի Գարեգինյան	06.02.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104- րդ հոդվածի 2- րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Վարույթը կասեցվել է
8	Գեղամ Հենրիկի	08.02.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ	ԼՂ ՊՆ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-	Ազգային, ռասայական կամ	Հրադադարի ռեժիմի	Վարույթը կասեցվել է

	Մանուկյան			տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս			րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	խախտում	
9	Գարեգին Հակոբի Մինասյան	15.02.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամասի մարտական դիրք տանող ճանապարհը մաքրելիս ձորն է գլորվել գորամասին պատկանող T-170 բուլդոզերը	ՀՀ Քննչական կոմիտե	ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳ-Վ հինգերորդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:	Դժբախտ պատահար/ ավտովթար	Դատաքննություն
10	Գարեգին Արայի Արզամանյան	17.02.2017	ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայության գորամասերից մեկի մշտական տեղակայման վայրում՝ մարտկոցների լիցքավորման պահեստ	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար/ թունավորում	Վարույթը կարճվել է
11	Լեոնիկ Ալեքսանդրի Օսյան	18.02.2017	ԼՂ	ՊԲ հարավային ուղղության գորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	2-րդ կայազորային քննչական բաժին		Ինքնասպանության հասցնել	Ինքնասպանություն	Նախաքննություն

12	Գոռ Ֆրունզիկի Խուդինյան	23.02.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար	Նախաքննություն
13	Նվեր Յուրիկի Բաբաջանյան	01.03.2017	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննությունը կասեցվել է
14	Գուրգեն Հարությունի Սարգսյան	01.03.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Մպանություն/զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Դատաքննություն
15	Արտակ Էդիկի Ռաֆայելյան	28.03.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
16	Գոռ	31.03.2017	ԼՂ	ՊԲ արևելյան	ԼՂ ՊԲ		ՀՀ քրեական	Ազգային,	Հրադադարի	Նախաքննություն

	Գևորգի Հովհաննիսյան			ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում			օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	ռեժիմի խախտում	թյունը կասեցվել է
17	Նարեկ Զավենի Հակոբյան/ Իսիլով	21.04.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամաս	ՀՀ ՊՆ	8-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Սպանություն/ զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Դատաքննություն
18	Նարեկ Հմայակի Հարությունյան	24.04.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	1-ին կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
19	Կարեն Արմենի Ավետիսյան	25.04.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	2-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպանություն	Նախաքննություն
20	Արմեն Ծատուրյան	26.04.2017	ՀՀ		ԶԼՄ				Առողջական	
21	Մհեր Ֆելիքսի	28.04.2017	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ	ԼՂ ՊԲ	2-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-	Ազգային, ռասայական կամ	Հրադադարի ռեժիմի	Նախաքննություն

	Արգումանյան			տեղակայված գործառնասերից մեկի պահպանության տեղամաս			րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	խախտում	
22	Ռաֆայել Արթուրի Բիշարյան	08.05.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գործառնասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու և ավելի մարդու մահ:	Դժբախտ պատահար /ավտովթար	Նախաքննություն
23	Ռուբեն Մնացականի Բարսեղյան	08.05.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գործառնասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու և ավելի մարդու մահ:	Դժբախտ պատահար/ ավտովթար	Նախաքննություն
24	Ռուբեն Հովհաննեսի Մնացականյան	08.05.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գործառնասերից մեկի պահպանության	ԼՂ ՊԲ	3-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու	Դժբախտ պատահար/ ավտովթար	Նախաքննություն

				տեղամաս				կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու և ավելի մարդու մահ:		
25	Գագիկ Առուշի Մեսրոպյան	10.05.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք	ՀՀ Քննչական կոմիտե	6-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Սպանություն/ զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքննություն
26	Արշակ Վահագնի Արշակյան	14.05.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք	ՀՀ Քննչական կոմիտե	9-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
27	Գրիշա Վարդանի Կարապետյան	17.05.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք	ՀՀ Քննչական կոմիտե	5-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու	Ինքնասպանություն	Նախաքննություն

								ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը		
28	Կարեն Մարիբեկի Դանիելյան	20.05.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104- րդ հոդվածի 2- րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Վարույթը կասեցվել է
29	Արմեն Ռաֆիկի Հարությունյան	26.05.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ				Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննությ ուն
30	Մելիք Դավիթի Խաչատրյան	01.06.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորամասի պահեստ	ՀՀ Քննչական կոմիտե	4-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110- րդ հոդվածի 1ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպա նություն	Նախաքննու թյուն
31	Մայիս Գեղամյան	03.06.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ/	ԶԼՄ				Առողջական	

				զինծառայողը 2013թ-ի ֆիզիկական վարժության ժամանակ ստացել է վնասվածք						
32	Նարեկ Զիվանի Մխիթարյան	14.06.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ	ԶԼՄ	4-րդ կայազորային քննչական բաժին			Առողջական	Նախաքննություն
33	Արայիկ Ռուդիկի Մատինյան	16.06.2017	ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր	Սպանություն, որն առաջացրել է 2 և ավելի մարդու մահ, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
34	Վիգեն Ժիրայրի Պողոսյան	16.06.2017	ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր	սպանություն, որն առաջացրել է 2 և ավելի մարդու մահ, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:		
35	Վարդան Ծովիկի Սարգսյան	16.06.2017	ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր	սպանություն, որն առաջացրել է 2 և ավելի մարդու մահ, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
36	Նարեկ Տիգրանի Գասպարյան	17.06.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
37	Վազգեն Ժիրայրի Պողոսյան	10.07.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								շարժառիթով սպանություն կատարելը		
38	Վարդան Արտավազդի Մելքոնյան	23.07.2017	ՀՀ	ՀՀ ՊՆ N գորմասի մերձակա տարածքում	ՀՀ ՊՆ	4-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպանություն	Նախաքննություն
39	Արկադի Լևոնի Ղամբարյան	28.07.2017	ՀՀ	ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված գորմասերից մեկի պահպանության տեղամասում	ՀՀ ՊՆ	6-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի հետ վարվելու կանոնները խախտելը	Սպանություն/զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքննություն
40	Արման Մամվելի Մովսիսյան	14.07.2017	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված գորմասերից մեկի պահպանության տեղամաս	ԼՂ ՊԲ	3-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
41	Աբաս Մամոյի Սլոյան	14.07.2017	ՀՀ	Շիրակի մարզի Հացիկ գյուղի 14-րդ փողոցի տներից մեկի օժանդակ կառույցում	ԶԼՄ	10-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպանություն	Նախաքննություն
42	Վարդան	17.08.2017	ՀՀ	Տավուշի մարզ	ԶԼՄ	6-րդ կայագորային	ՀՀ քրեական	Սպանություն	Դիտավորյալ	Նախաքննություն

	Գրիգորյան					քննչական բաժին	օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս		սպանություն	թյուն
43	Անդրանիկ Արմենի Մկրտչյան	20.08.2017	ՀՀ	Մեղրի	ԶԼՄ	9-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Ինքնասպանության հասցնել	Ինքնասպանություն	Նախաքննություն
44	Արշակ Աղասու Բիշարյան	27.08.2017	ԼՂ	Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալ	ԼՂ ՊԲ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
45	Հայկ Գագիկի Խաչատրյան	01.09.2017	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
46	Սեյրան Մանվելի Մարգարյան	28.09.2017	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում	ԼՂ ՊԲ	2-րդ կայագորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

2017 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ
ԼՂ ՊԲ-ՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. Գարիկ Արտաշեսի Վարդանյան

2017 թ-ի հունվարի 15-ին՝ ժամը 23:35-ին, Երևանի կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է 2016թ. դեկտեմբերի 30-ին հակառակորդի կողմից ծանր վիրավորում ստացած զինծառայող, 1996թ. ծնված Գարիկ Արտաշեսի Վարդանյանը:⁸ Նրան Ստեփանակերտի զինվորական հոսպիտալից ուղղաթիռով տեղափոխել են Երևան,⁹

ՀՀ զինվորական քննչական գլխավոր վարչության 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ:¹⁰

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննություն շարունակվելու մասին:

2. Անդրանիկ Սմբատի Մուսիկյան

2017թ-ի հունվարի 18-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է զինծառայող 1997թ. ծնված Անդրանիկ Սմբատի Մուսիկյանը:¹¹

Անդրանիկ Մուսիկյանը Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի բնակիչ էր, ընտանիքի փոքր տղան էր, ուներ 2 ավագ եղբայր:¹²

ՀՀ 2-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ:¹³

⁸ <http://nkrmil.am/news/view/1685>

⁹ <https://news.am/arm/news/367787.html>

¹⁰ <http://investigative.am/news/view/zinvor-koma-mah-hakarakord.html>

¹¹ <http://nkrmil.am/news/view/1689>

¹² <https://news.am/arm/news/368319.html>

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի վարույթը կասեցվելու մասին է:

3. Կարեն Մարատի Ուլուբաբյան

2017թ-ի հունվարի 22-ին՝ ժամը 23:25-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացել է պայմանագրային զինծառայող, 1995թ. ծնված Կարեն Մարատի Ուլուբաբյանը.¹⁴

Կարեն Ուլուբաբյանը ԼՂՀ Մարտունի քաղաքից էր: Նա բազմազավակ ընտանիքի ավագ որդին էր, իրենից բացի ուներ 2 եղբայր և 2 քույր: Նրա հայրն ու հորեղբայրը նույնպես զոհվել են Մարտունիում՝ Արցախյան պատերազմի ժամանակ:¹⁵

ՀՀ 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ:

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի նախաքննությունը կասեցվելու մասին:

4. Գոռ Համազասպի Գարեգինյան

2017թ-ի փետրվարի 6-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացել է ՊԲ զինծառայող, 1997թ. ծնված Գոռ Համազասպի Գարեգինյանը.¹⁶

Գոռ Գարեգինյանի ծնողներն ու եղբայրները բնակվում են Ռուսաստանի Դաշնությունում: Ջոհված զինծառայողի ընտանիքը նախկինում բնակվել է տնակում և սոցիալապես անապահով են եղել:¹⁷

¹³ <http://investigative.am/news/view/andranik-musikyan.html>

¹⁴ <http://nkrmil.am/news/view/1696>

¹⁵ <http://www.tert.am/am/news/2017/01/23/Karen-Ulubabyan/2256917>

¹⁶ <http://nkrmil.am/news/view/1718>

¹⁷ <http://henaran.am/254558.html>

ՀՀ 3-րդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ հակառակորդի կողմից պարտադիր ժամկետային զինձառայողի սպանության դեպքի առթիվ:¹⁸

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի վարույթը կասեցվելու մասին է:

5. Գեղամ Հենրիկի Մանուկյան

2017թ-ի փետրվարի 8-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացել է ՊԲ պայմանագրային զինձառայող, 1979թ. ծնված Գեղամ Հենրիկի Մանուկյանը:¹⁹

Զինձառայող Գեղամ Մանուկյանը շուրջ 20 տարի ծառայում էր բանակում, Մարտակերտից էր, ամուսնացած էր, երեխաներ ուներ:²⁰

ՀՀ 3-րդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ հակառակորդի կողմից հայկական զինված ուժերի պայմանագրային զինձառայողի սպանության, ժամկետային զինձառայողին սպանելու փորձ կատարելու դեպքի առթիվ:²¹

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի վարույթը կասեցվելու մասին է:

6. Նվեր Յուրիկի Բաբաջանյան

2017թ-ի մարտի 1-ին՝ ժամը 16:50-ի սահմաններում հակառակորդի կողմից ձեռնարկված արկակոծության արդյունքում, շփման գծի հարավարևելյան (Մարտունի) հատվածում բեկորային վիրավորում է ստացել եւ մահացել ՊԲ պայմանագրային զինձառայող, 1980թ. ծնված Նվեր Յուրիկի Բաբաջանյանը:

Նվեր Բաբաջանյանը Արցախի Մարտունու շրջանից էր, ամուսնացած էր, ունի երկու անչափահաս երեխա: Նա ՊԲ զինված ուժերում ծառայության էր անցել 1 տարի առաջ:²²

¹⁸ <http://investigative.am/news/view/gor-gareqinyan.html>

¹⁹ <http://nkrmil.am/news/view/1723>

²⁰ <https://news.am/arm/news/372216.html>

²¹ <http://investigative.am/news/view/spanutyun-spanutyun-porc-zincarayoxner.html>

²² <https://news.am/arm/news/376267.html>

Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն:²³

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի նախաքննությունը կասեցվելու մասին:

7. Արտակ Էդիկի Ռաֆայելյան

2017թ-ի մարտի 28-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է ՊԲ զինծառայող, 1997թ. ծնված Արտակ Էդիկի Ռաֆայելյանը:²⁴

Արտակ Ռաֆայելյանը Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակիչ էր, ընտանիքի ավագ որդին, «Գինեսի» գրքի ռեկորդակիր էր, հուլիսին զորացրվելու էր: Նա ունի իրենից փոքր եղբայր, որն այս տարի է զորակոչվել բանակ:²⁵

ՀՀ 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանության փորձ կատարելու դեպքի առթիվ:²⁶

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախանքությունը շարունակվելու մասին:

8. Գոռ Գևորգի Հովհաննիսյան

2017թ-ի մարտի 31-ին՝ ժամը 14:45-ի սահմաններում, ՊՆ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմի խախտման հետևանքով, մահացել է ՊԲ պայմանագրային զինծառայող, 1993թ. ծնված Գոռ Գևորգի Հովհաննիսյանը:²⁷

Գոռ Հովհաննիսյանը ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: Գոռ Հովհաննիսյանը սպա էր, իսկ նրա հայրը Արցախյան ազատամարտի

²³ <http://nkrmil.am/news/view/1766>

²⁴ <http://nkrmil.am/news/view/1804>

²⁵ <https://news.am/arm/news/381459.html>

²⁶ <http://galatv.am/hy/news/185092/>

²⁷ <http://nkrmil.am/news/view/1810>

մասնակից: Գոռ Հովհաննիսյանը ընտանիքի ավագ զավակն էր, ունի իրենից փոքր ևս 2 եղբայր, որոնցից մեկը այժմ Պաշտպանության բանակում ժամկետային զինծառայող է:²⁸

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի նախաքննությունը կասեցվելու մասին:

9. Նարեկ Հմայակի Հարությունյան

2017թ-ի ապրիլի ապրիլի 24-ին՝ ժամը 17:50-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացել է ՊԲ զինծառայող, 1997թ. ծնված Նարեկ Հմայակի Հարությունյանը:²⁹

Նարեկն ընտանիքի միակ որդին էր, ուներ մեկ քույր: Հայրը երրորդ կարգի հաշմանդամ է:³⁰

1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 104, մաս 2-րդ, կետ 13-րդ):³¹

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

10. Մհեր Ֆելիքսի Արզումանյան

2017թ-ի ապրիլի 28-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է ՊԲ զինծառայող, 1998թ. ծնված Մհեր Ֆելիքսի Արզումանյանը:³²

Զինծառայող Մհեր Արզումանյանը Սյունիքի մարզի Առաջաձոր գյուղից էր: Մհերը ուներ 3 մեծ եղբայր եւ 1 կրտսեր քույր: Ընտանիքն ապրում է ծանր սոցիալական պայմաններում, զբաղվում է գյուղատնտեսությամբ: Զոհված զինծառայողի 3 եղբայրները ծառայել են բանակում:³³

²⁸ <http://henaran.am/271462.html>

²⁹ <http://galatv.am/hy/news/188048/>

³⁰ <https://news.am/arm/news/386761.html>

³¹ <http://galatv.am/hy/news/188058/>

³² <http://nkrmil.am/news/view/1855>

³³ <https://news.am/arm/news/387070.html>

2-րդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ:³⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

11. Կարեն Սարիբեկի Դանիելյան

*2017թ-ի մայիսի 20-ին՝ ժամը 07:20-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է ժամկետային զինծառայող, 1996թ. ծնված Կարեն Սարիբեկի Դանիելյանը:*³⁵

Կարեն Դանիելյանը Շիրակի մարզի Սարատակ գյուղի բնակիչ էր, ընտանիքի միակ որդին էր, ունի իրենից փոքր քույր, սոցիալապես անապահով ընտանիքից էր:³⁶ Armtimes.com կայքի փոխանցած տեղեկության համաձայն 2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին Կարենը պատահական էր ողջ մնացել, քանի որ թշնամու գնդակոծության հետևանքով դիտակետի փլուզում է տեղի ունեցել:³⁷

3-րդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ:³⁸

12. Արմեն Ռաֆիկի Հարությունյան

*2017թ-ի մայիսի 26-ին՝ ժամը 11:45-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է պայմանագրային զինծառայող 1996թ-ին ծնված Արմեն Ռաֆիկի Հարությունյանը:*³⁹

³⁴ <http://qalatv.am/hy/news/188433/>

³⁵ <http://nkrmil.am/news/view/1893>

³⁶ <http://armlur.am/692802/>

³⁷ <http://www.armtimes.com/hy/article/112703>

³⁸ <http://investigative.am/news/view/karen-danielyan.html>

³⁹ <http://nkrmil.am/news/view/1901>

Արմեն Հարությունյանը ԼՂՀ Մարտակերտի շրջանի Հաթերք համայնքի բնակիչ էր: Ունի իրենից փոքր եղբայր: ⁴⁰

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

13. Արայիկ Ռուդիկի Մատինյան

14. Վիզեն Ժիրայրի Պետրոսյան

15. Վարդան Ծովակի Սարգսյան

2017թ-ի հունիսի 16-ին՝ ժամը 18:05-ի սահմաններում, ՊԲ ժամկետային զինծառայողներ Արայիկ Ռուդիկի Մատինյանը (ծնված 1997թ.), Վիզեն Ժիրայրի Պետրոսյանը (ծնված 1997թ.) և Վարդան Ծովակի Սարգսյանը (ծնված 1997թ.) մահացել են հակառակորդի կողմից հաստոցավոր հակատանկային նոնականետերից հրադադարի պահպանման ռեժիմի խախտման հետեւանքով:

Արայիկ Ռուդիկի Մատինյանը Լոռու մարզի Շնող գյուղից էր, անապահով ընտանիքից էր, ունի 2 անչափահաս եղբայր և իրենից մեծ քույր:⁴¹ Վիզեն Ժիրայրի Պետրոսյանը Սևան քաղաքի բնակիչ էր, ունի 2 եղբայր: 2017թ-ի հունիսին պետք է գորացրվեր: ⁴²

Վարդան Ծովակի Սարգսյանը Արագածոտնի մարզի Լուսազյուղ համայնքից էր, սոցիալապես անապահով ընտանիքից, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի ուսանող էր: ⁴³

Դեպքի առթիվ 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերի հատկանիշներով: ⁴⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

⁴⁰ <https://news.am/arm/news/392121.html>

⁴¹ <http://www.1in.am/2159659.html>

⁴² <http://www.1in.am/2159659.html>

⁴³ <http://www.1in.am/2159659.html>

⁴⁴ <http://investigative.am/news/view/4-zincarayoxi-spanutyun-hakarakord.html>

16. Նարեկ Տիգրանի Գասպարյան

2017թ-ի հունիսի 17-ին՝ առավոտյան ժամը 09:40-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով գլխի շրջանում հրազենային վիրավորում է ստացել եւ մահացել ՊԲ ժամկետային զինծառայող Նարեկ Տիգրանի Գասպարյանը:⁴⁵

Նարեկը Երեւանի բնակիչ էր, ունի 2 քույր ու 1 եղբայր, որը մեկ տարի առաջ է բանակից վերադարձել: Ապրիլյան պատերազմին մասնակցելու համար ավելի վաղ պարզևատրվել էր:⁴⁶

Դեպքի առթիվ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 13-րդ կետի հատկանիշներով:⁴⁷

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

17. Վազգեն Ժիրայրի Պողոսյան

2017թ-ի հուլիսի 10-ին՝ ժամը 17:40-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից, մահացել է ՊԲ զինծառայող, 1997թ. ծնված Վազգեն Ժիրայրի Պողոսյանը:⁴⁸

Վազգեն Պողոսյանը Վայոց ձորի Հորբատեղ գյուղից էր: Նա անապահով ընտանիքից էր, իսկ ծնողներն առողջական խնդիրներ ունեն:⁴⁹

ՀՀ 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ հակառակորդի կողմից պարտադիր ժամկետային զինծառայող Վազգեն Ժիրայրի Պողոսյանի սպանության դեպքի առթիվ:⁵⁰

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

⁴⁵ <http://nkrmil.am/news/view/1918>

⁴⁶ <https://news.am/arm/news/396124.html>

⁴⁷ <http://investigative.am/news/view/4-zincarayoxi-spanutyun-hakarakord.html>

⁴⁸ <http://nkrmil.am/news/view/1943>

⁴⁹ <https://news.am/arm/news/399680.html>

⁵⁰ <http://investigative.am/news/view/zincarayox-vazgen-poxosyan.html>

18. Արման Սամվելի Մովսիսյան

2017թ-ի օգոստոսի 14-ին ժամը 11:00-ի սահմաններում ՊԲ-ի հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է ՊԲ զինծառայող, 1998թ. ծնված Արման Սամվելի Մովսիսյանը:⁵¹

ՀՀ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ հակառակորդի կողմից պարտադիր ժամկետային զինծառայող Արման Սամվելի Մովսիսյանի սպանության դեպքի առթիվ:⁵²

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

19. Արտակ Աղասու Բիշարյան

2017թ. օգոստոսի 27-ին՝ ժամը 02:30-ի սահմաններում, Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալում մահացել է հակառակորդի կողմից ծանր վիրավորում ստացած ՊԲ պայմանագրային զինծառայող, 1991թ. ծնված Արտակ Աղասու Բիշարյանը:⁵³

Արտակ Բիշարյանը օգոստոսի 23-ին էր հակառակորդի կողմից ծանր վիրավորումն ստացել:

Պայմանագրային զինծառայողը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի սան էր, 4 տարի ծառայում էր Արցախի զինված ուժերում:

Արտակ Բիշարյանը Շիրակի մարզի Հռոռմ գյուղի բնակիչ էր, սոցիալական ծանր պայմաններում ապրող ընտանիքից: Նա ընտանիքի միջնեկ երեխան էր, ունի քույր եւ եղբայր:⁵⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

⁵¹ <http://nkrmil.am/news/view/1965>

⁵² <http://investigative.am/news/view/arman-movsisyan.html>

⁵³ <http://nkrmil.am/news/view/1972>

⁵⁴ <https://news.am/arm/news/406735.html>

20. Հայկ Գազիկի Խաչատրյան

*2017թ-ի սեպտեմբերի 1-ին՝ ժամը 11:50-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ականի պայթյունից մահացել է ՊԲ զինծառայող, 1998թ. ծնված Հայկ Գազիկի Խաչատրյանը:*⁵⁵

Հայկ Խաչատրյանը Շիրակի մարզի Գուսանազյուղ համայնքից էր: Նա 8 ամիս առաջ էր մեկնել ծառայության: 19-ամյա Հայկ Խաչատրյանը տան ավագ որդին էր, ուներ իրենից փոքր երկու եղբայր:⁵⁶

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

21. Սեյրան Մանվելի Սարգսյան

*2017թ-ի սեպտեմբերի 28-ին՝ ժամը 15:00 սահմաններում, ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող, 1988թ. ծնված Սեյրան Մանվելի Սարգսյանը:*⁵⁷

Սեյրան Սարգսյանը Տավուշի մարզի Թեղուտ համայնքից էր, սոցիալապես անապահով ընտանիքից:⁵⁸

Երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ: Նախաքննությունը շարունակվում է:⁵⁹

Բ. Դժբախտ պատահար

Ավտովթար

1. Գարեգին Հակոբի Մինասյան

2017թ-ի փետրվարի 15-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի մարտական դիրք տանող ճանապարհը մաքրելիս ձորն է գլորվել զորամասին պատկանող

⁵⁵<http://nkrmil.am/news/view/1975>

⁵⁶<https://news.am/arm/news/407862.html>

⁵⁷<http://nkrmil.am/news/view/1990>

⁵⁸<https://news.am/arm/news/412457.html>

⁵⁹<http://investigative.am/news/view/sevran-sargsyan.html>

T-170 տեսակի բուլդոզեր մեքենան, ինչի հետևանքով բուլդոզերում գտնվող պայմանագրային զինձառայողներ Գարեգին Հակոբի Մինասյանը, Արմեն Միխայելի Պուխան և Վրույր Ֆիրդուսի Ներսիսյանն ստացել են մարմնական վնասվածքներ:

ՀՀ ՊՆ Գեղարքունիքի կայազորային զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին պայմանագրային զինձառայող Գարեգին Հակոբի Մինասյանը մահացել է:

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պայմանագրային զինձառայողի մահվան պատճառ դարձած վթարի դեպքի առթիվ:⁶⁰

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն այն մասին, որ գործը գտնվում դատաքննության փուլում:

2. Ռուբեն Մնացականի Բարսեղյան

3. Ռաֆայել Արթուրի Բիշարյան

4. Ռուբեն Հովհաննեսի Մնացականյան

2017թ-ի մայիսի 8-ի առավոտյան ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում տեղի է ունեցել ճանապարհատրասնպորտային պատահար, զորամասին պատկանող մեքենան զրորվել է զորամասին հարակից ջրամբար, որի հետևանքով ջրահեղձ են եղել ՊԲ զինձառայողներ Ռուբեն Մնացականի Բարսեղյանը (ծնվ. 1998թ.), Ռաֆայել Արթուրի Բիշարյանը (ծնվ. 1997թ.) և Ռուբեն Հովհաննեսի Մնացականյանը (ծնվ. 1998թ.):

Որոնողական աշխատանքների արդյունքում՝ նույն օրը հայտնաբերվել են Ռուբեն Բարսեղյանի և Ռաֆայել Բիշարյանի մարմինները:⁶¹ Իսկ Ռուբեն Մնացականյանի մարմինը հայտնաբերվել է 3 օր անց՝ մայիսի 11-ին:⁶²

3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ զինձառայողների մահվան պատճառ դարձած ավտովթարի դեպքի առթիվ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ երեք զինձառայողներին վերջին անգամ տեսել են միասին «ՈԻԱԶ-315195» մակնիշի ավտոմեքենայի մեջ, որը կայանված է եղել

⁶⁰ <http://investigative.am/news/view/djbaxt-depg-zincarayoxner-gexarguniq.html>

⁶¹ <https://news.am/arm/news/373773.html>

⁶² <http://nkrmil.am/news/view/1872>

⁶² http://forrights.am/?ln=1&id=10&page_id=601

գորամասի մշտական տեղակայման վայրում: Դրանից հետո մեքենան նկատվել է գորամասից դուրս՝ Մատաղիս-Տոնաշեն ավտոճանապարհի սզբնամասում՝ դեպի Տոնաշեն երթելու ելլիս:

Տարածքի զննությամբ՝ Տոնաշեն գյուղ տանող ավտոճանապարհի 2-րդ կիլոմետրին ընթացքի ուղղությամբ արձանագրվել են անվահետքեր, որոնք վերջացել են՝ դուրս գալով ճանապարհի երթելու ելլի մասից, որից մոտ 50 մետր խորության վրա հոսում է գետ: ԱՀ փրկարար ծառայության աշխատակիցների կողմից գետում՝ մոտ 9 մետր խորության վրա, հայտնաբերվել է «ՈԻԱԶ-315195» մակնիշի զինհամարանիշի ավտոմեքենան: ⁶³

Զինծառայողների մահվան պատճառ դարձած ավտովթարի միջադեպից հետո՝ մայիսի 29-ին պաշտոնից ազատվել են տվյալ գորամասի հրամանատարն ու նրա երկու տեղակալները: ⁶⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

Թունավորում

1. Գարեգին Արայի Արգամանյան

*2017թ-ի փետրվարի 17-ին ՊԲ կենտրոնական ենթակայության գորամասերից մեկի մշտական տեղակայման վայրում շմոլ գազի թունավորումից մահացել է զինծառայող, 1997թ. ծնված Գարեգին Արայի Արգամանյանը:*⁶⁵

Գարեգին Արգամանյանը տան միակ զավակն է եղել:⁶⁶

ՀՀ 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ժամկետային զինծառայող Գարեգին Արգամանյանի մահվան դեպքի առթիվ, ինչի արդյունքում պարզվել է, որ Գարեգին Արգամանյանը մահացել է բենզոպրեդնիսոլի արտանետած շմոլ գազից: Քրեական գործով կատարվել է դեպքի վայրի զննություն, դիակի արտաքին զննում, նշանակվել դիակի դատաբժշկական փորձաքննություն: ⁶⁷

⁶³ <https://news.am/arm/news/388890.html>

⁶⁴ <http://razm.info/103146>

⁶⁵ <http://nkml.am/news/view/1737>

⁶⁶ <http://www.tert.am/arm/news/2017/02/17/soldier/2282081>

⁶⁷ <http://investigative.am/news/view/zinvori-mah-shmol-gaz.html>

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործի վարույթը կարճելու մասին:

Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ

1. Գոռ Ֆրունզիկի Խուղինյան

2017թ-ի փետրվարի 23-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, անհայտ հանգամանքներում մահացել է պայմանագրային զինծառայող, 1991թ. ծնված Գոռ Ֆրունզիկի *Խուղինյանը.⁶⁸*

3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, ինչի արդյունքում պարզվել է, որ Գոռ Խուղինյանը մահացել է փամփուշտը փողում պայթելու հետևանքով:

Գոռ Խուղինյանը Վանաձորից էր, ամուսնացած էր, ուներ մեկ մանկահասակ երեխա:⁶⁹ ՀՀ 3-րդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու պայմանագրային զինծառայող Գոռ Ֆրունզիկի Խուղինյանի մահվան հանգամանքները:⁷⁰

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

Գ. Ինքնասպանություն

1. Շավարշ Հակոբի Գալստյան

2017 թ-ի հունվարի 25-ին՝ ժամը 08:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքում հայտնաբերվել է պարտադիր

⁶⁸<http://nkrmil.am/news/view/1749>

⁶⁹<https://news.am/arm/news/374995.html>

⁷⁰<http://investigative.am/news/view/gor-xudinyan.html>

*ժամկետային զինծառայող, շարքային Շավարշ Հակոբի Գալստյանի մարմինը՝
ծնոտի շրջանում հրազենային վնասվածքով:*⁷¹

Զինծառայողի դին հայտնաբերվել է մարտական դիրքի խրամաբջջում՝ դիտանցքը փակելու համար նախատեսված փայտյա կոճղի վրա՝ նստած դիրքում: Razm.info-ի հավաստմամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ նույն հերթափոխում որպես դիտորդ նշանակված մեկ այլ զինծառայող պարբերաբար շահագործել է Շավարշ Գալստյանին և իր թվացյալ առավելությունն ու գերակայությունն ընդգծելու համար «հանձնարարել» անձնական բնույթի ծառայություններ մատուցել իրեն, այն է՝ սուրճ, թեյ պատրաստել, լվանալ աղտոտված ափսեները, բացի այդ, հայհոյել և վիրավորել է նրա արժանապատվությունը:⁷²

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 6-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը):⁷³

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

2. Լեռնիկ Ալեքսանդրի Օսյան

*2017թ-ի փետրվարի 18-ին՝ ժամը 11.45-ի սահմաններում ՊԲ հարավային ուղղության զորամասերից մեկի պահպանության տեղամասում, անհայտ պայմաններում, մահացու հրազենային վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող, 1998թ. ծնված Լեռնիկ Ալեքսանդրի Օսյանը:*⁷⁴

ՀՀ 2-րդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվել՝ պարզելու ժամկետային զինծառայող Լեռնիկ Ալեքսանդրի Օսյանի մահվան հանգամանքները:

Լեռնիկ Օսյանը մահացու վնասվածքը ստացել է իրեն ամրակցված գնդացրով:⁷⁵

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

⁷¹<http://investigative.am/news/view/shavarsh-galstyan.html>

⁷²<http://razm.info/95333>

⁷³<http://investigative.am/news/view/shavarsh-galstyan.html>

⁷⁴<http://nkrmil.am/news/view/1740>

⁷⁵<http://investigative.am/news/view/learnik-osyan.html>

3. Կարեն Արմենի Ավետիսյան

2017թ-ի ապրիլի 25-ին ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում ծնոտի շրջանում հրազենային վիրավորում է ստացել եւ մահացել ՊԲ ժամկետային զինծառայող, 1998թ. ծնված Կարեն Արմենի Ավետիսյանը:⁷⁶

Կարեն Ավետիսյանը Երեւանի բնակիչ էր: Նա բանակ էր զորակոչվել 2016թ-ի հուլիսին: Կարեն Ավետիսյանը ընտանիքի միակ որդին էր, ունի իրենից փոքր քույր:⁷⁷

Դեպքի առթիվ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով:⁷⁸

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

4. Արշակ Վահագնի Արշակյան

2017թ-ի մայիսի 14-ին՝ ժամը 15:15-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ 1998թ-ի ծնված Արշակ Վահագնի Արշակյանը՝ կզակի շրջանում մահացու հրազենային վնասվածքով:⁷⁹

Արշակ Արշակյանի հայրը մահացել է Ռուսաստանի Դաշնությունում արտագնա աշխատանքի ժամանակ, կրտսեր սերժանտը բնակվում էր մոր եւ եղբոր հետ:⁸⁰

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ինքնասպանության հասցնելը:⁸¹

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

5. Գրիշա Վարդանի Կարապետյան

⁷⁶<http://nkrmil.am/news/view/1848>

⁷⁷<https://news.am/arm/news/386630.html>

⁷⁸<http://galatv.am/hy/news/188166/>

⁷⁹<http://galatv.am/hy/news/190004/>

⁸⁰<https://news.am/arm/news/390206.html>

⁸¹<https://news.am/arm/news/390206.html>

2017 թվականի մայիսի 17-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գործառնասի պահպանության տեղամասի մարտական դիրքում մահացու հրազենային վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող Գրիշա Վարդանի Կարապետյանը:⁸²

ՔԿ ՋՔԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժնի պաշտոնական որակմամբ Գրիշա Կարապետյանին հրազենային վնասվածքը պատճառվել է իր կողմից՝ իրեն ամրակցված ինքնաձիգով: Գրիշա Կարապետյանը Վարդենիս քաղաքից էր, ամուսնացած էր, ուներ երկու մանկահասակ երեխա:⁸³

ՀՀ ՔԿ ՋՔԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով:⁸⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

6. Մելիք Դավիթի Խաչատրյան

2017թ-ի հունիսի 1-ին, ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գործառնասի պահեստում հայտնաբերվել է պայմանագրային զինծառայող, ենթասպա, 1981թ. ծնված Մելիք Դավիթի Խաչատրյանը՝ կախված վիճակում:⁸⁵

Մելիք Դավիթի Խաչատրյանը Շիրակի մարզի Հառիճ համայնքից էր, տարիներ առաջ ընտանիքով տեղափոխվել էր Էջմիածին: Ամուսնացած էր, ուներ 10-ամյա որդի:⁸⁶

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով: Ըստ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության՝ դեպքի վայրում նամակ է հայտնաբերվել, որով տեղեկացնում է հարազատներին, որ վարկ է ունեցել, բացի դա, մի քանի ֆիզիկական անձանց՝ մի քանի հազար դոլարի պարտք, որ չի կարողացել մարել:⁸⁷

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

⁸² <http://investigative.am/news/view/grisha-karapetyan.html>

⁸³ <http://armlur.am/692221/>

⁸⁴ <http://investigative.am/news/view/grisha-karapetyan-grgorc.html>

⁸⁵ <http://investigative.am/news/view/melik-xachatryan.html>

⁸⁶ <https://news.am/arm/news/393275.html>

⁸⁷ <https://news.am/arm/news/394306.html>

⁸⁷ <http://investigative.am/news/view/zincarayox-melik-xachatryan-grgorc.html>

7. Վարդան Արտավազդի Մելքոնյան

2017թ-ի հուլիսի 23-ին՝ ժամը 06.30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գործառնախի մերձակա տարածքում հայտնաբերվել է գործառնախի ինքնակամ լքած (ըստ ՀՀ ՊՆ պաշտոնական կայքէջի) ժամկետային զինծառայող, 1998թ. ծնված կրտսեր սերժանտ Վարդան Արտավազդի Մելքոնյանի դին՝ կախված վիճակում:⁸⁸

Վարդան Մելքոնյանը Լոռու մարզի Վանաձոր քաղաքի բնակիչ էր, 1 տարի 10 օրվա ծառայող:⁸⁹

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ չորրորդ կայագրային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Վարդան Արտավազդի Մելքոնյանի մահվան հանգամանքները:⁹⁰

Դեպքի ուղղությամբ ՀԲԱ Վանաձորի գրասենյակի ձեռնարկած քայլերը

ՀԲԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը՝ փաստաբան Արայիկ Զայանը, Վարդան Մելքոնյանի մահվան դեպքով ներգրավված է որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: Նրա փոխանցմամբ՝ գործը գտնվում է նախաքննության փուլում, կատարվել է դատաբժշկական փորձաքննություն, սակայն գործի գաղտնիությունը ապահովելու համար չի հրապարակվում մանրամասները, կատարվել են նաև այլ փորձաքննություններ: Բացի այդ, լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն իրականացնելու համար միջնորդություն է ներկայացվելու: Գործով կա մեկ կալանավորված, ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով, այն է ինքնասպանության հասցնելը: Գործով կալանավորվածը հանդիսանում է Վարդան Մելքոնյանի ծառայակիցը:

8. Աբաս Մամոյի Սլոյան

2017թ-ի օգոստոսի 14-ին Շիրակի մարզի Հացիկ գյուղում հորեղբոր տանը կախված վիճակում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, 1998թ-ի ծնված Աբաս Մամոյի Սլոյանի դին:⁹¹

Աբաս Սլոյանը Շիրակի Մարզի Հացիկ գյուղից էր, ընդամենը 20 օրվա զինծառայող:

⁸⁸ <http://www.mil.am/hy/news/4873>

⁸⁹ <https://news.am/arm/news/401807.html>

⁹⁰ <http://investigative.am/news/view/zinvor-mah07.html>

⁹¹ <https://news.am/arm/news/404886.html>

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնում քննություն է կատարվում՝ պարզելու ժամկետային զինծառայող Աբաս Մամոյի Սլոյանի մահվան հանգամանքները:⁹²

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

9. Անդրանիկ Արմենի Մկրտչյան

2017թ-ի Օգոստոսի 20-ին՝ ժամը 16.20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի տարածքում հայտնաբերվել է զինծառայող Անդրանիկ Արմենի Մկրտչյանի դին՝ ծնոտի շրջանում ստացած հրազենային վիրավորումով (ծնված 1991թ., Ապարանի ՋԿ):⁹³

ՀՀ քննչական կոմիտեի 9-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի առաջին մասով: Ստեղծվել է քննչական խումբ, և ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ մահվան բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ: Նախնական տվյալներով՝ մահացու հրազենային վնասվածքը պատճառվել է Ա. Մկրտչյանին ամրակցված ինքնաձիգից:⁹⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ նախաքննությունը շարունակվելու մասին:

Դ. Սպանություն

Ջենքի հետ վարվելու կանոնների խախտում

1. Արայիկ Իգորի Սարգսյան

2017թ-ի հունվարի 16-ին՝ ժամը 12:35-ի սահմաններում, ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացել է Հաղորդի շրջանի բնակիչ, 1995 թ. ծնված պայմանագրային զինծառայող, Արայիկ Իգորի Սարգսյանը:⁹⁵

ՀՀ 2-րդ կայազորային քննչական բաժնում քննվող քրեական գործով ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել են պայմանագրային զինծառայող, սերժանտ

⁹² <http://investigative.am/news/view/abas-sloyan.html>

⁹³ <http://www.mil.am/hy/news/4906>

⁹⁴ <http://investigative.am/news/view/andranik-mkrtchyan.html>

⁹⁵ <http://nkrmil.am/news/view/1686>

Արայիկ Սարգսյանի մահվան հանգամանքները, առերևույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը:

ՀՀ Քննչական կոմիտեի հավաստմամբ՝ քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ պայմանագրային զինձառայողը կյանքի հետ անհամատեղելի վնասվածքն ստացել է նույն զորամասի զինձառայողներից մեկի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով:

Նախնական տվյալներով՝ շարքային զինձառայողը, վերցնելով ծառայակցին ամրակցված ինքնաձիգը, մասամբ հանել է փամփշտատուփը և կատարել լիցքավորման գործողություն, ապա կարծելով, որ ինքնաձիգի փամփշտանոց փամփուշտ չի մտել, սեղմել է ձգանք: Արդյունքում՝ արձակված կրակոցից պայմանագրային զինձառայող Ա.Սարգսյանը որովայնի շրջանում ստացել է հրազենային վիրավորում և զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել:⁹⁶

2. Գուրզեն Հարությունի Սարգսյան

2017թ-ի հունվարի 16-ին՝ ժամը 23:55-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում զենքի օգտագործման կանոնների խախտման արդյունքում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինձառայող, 1997թ. ծնված Գուրզեն Հարությունի Սարգսյանը:⁹⁷

ՀՀ 1-ին կայազորային քննչական բաժնում քննություն է տարվել՝ պարզելու ժամկետային զինձառայող Գուրզեն Սարգսյանի հրազենային վիրավորում ստանալու հանգամանքները:

Նախաքննության արդյունքում պարզ է դարձել, որ Գարեգին Սարգսյանը մահացու հրազենային վիրավորումը ստացել է մարտական դիրքում հերթապահություն իրականացնելիս՝ կրտսեր սերժանտի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով:

2017թ-ի մարտի 1-ին ժամը 14:10 Հայաստանի պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է Գուրզեն Սարգսյանը:⁹⁸

⁹⁶<http://investigative.am/news/view/serjant-arayik-sargsyan.html>

⁹⁷<http://nkrmil.am/news/view/1685>

⁹⁸<http://galatv.am/hy/news/182211/>

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը դատաքննության փուլում գտնվելու մասին:

3. Նարեկ Զավենի Հակոբյան/ Իսիլով⁹⁹

2017թ-ի ապրիլի 21-ին ժամը 10:25-ի սահմաններում Վայոց Ձորում կազմակերպված ճամբարային հավաքների ժամանակ կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածք է ստացել պայմանագրային զինծառայող, 1986թ. ծնված Նարեկ Զավենի Հակոբյանը:

Նարեկ Հակոբյանը Վայոց ձորի մարզի Արփի գյուղի բնակիչ էր, Արփիի գյուղապետ Ռազմիկ Վարդանյանը forrights.am-ի հետ զրույցում ասել է, որ Նարեկը 11 տարվա ծառայող էր, այդպես էր գումար վաստակում եւ կարողանում ընտանիքը պահել: Ուներ մեկ երեխա: ¹⁰⁰

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 8-րդ կայագրային քննչական բաժնում քննվող քրեական գործով իրականացված քննչական գործողությունների արդյունքում պարզվել են պայմանագրային զինծառայող Նարեկ Հակոբյանի մահվան՝ էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Նախնական քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել, ըստ որի մասնագիտական պարապմունքներ անցկացնելու ժամանակ նույն գորամասի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտն իրեն ամրակցված «ԱԿՄՍ» ինքնաձիգը մաքրելու ժամանակ խախտել է զենքի հետ վարվելու կանոնները, այն է՝ առանց հավաստիանալու փամփշտանոցում փամփուշտ առկա է, թե՛ ոչ, կրակել է, որի հետևանքով աջ աճուկի վերին հատվածում հրազենային մահացու վիրավորում է ստացել մոտակայքում գտնվող պայմանագրային զինծառայող, շարքային Նարեկ Զավենի Հակոբյանը: ¹⁰¹

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 8-րդ կայագրային քննչական բաժնում քննվող քրեական գործով մեղադրանք է առաջադրվել պայմանագրային զինծառայող Ա.Սարգսյանին: ¹⁰²

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը դատաքննության փուլում գտնվելու մասին:

⁹⁹ Չինծառայողի մահվան դեպքի մասին որոշ աղբյուրներում նշված է Նարեկ Իսիլով, իսկ որոշ աղբյուրներում՝ Նարեկ Հակոբյան, սակայն առկա է դեպքի միննույն նկարագրությունը:

¹⁰⁰ http://forrights.am/?ln=1&id_ =10&page_id=596

¹⁰¹ <http://galatv.am/hy/news/187754/>

¹⁰² <http://galatv.am/hy/news/188077/>

4. Գագիկ Առուշի Մեսրոպյան

2017 թվականի մայիսի 10-ի առավոտյան ժամը 08:40-ի սահմաններում ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում հրազենային վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գագիկ Առուշի Մեսրոպյանը, ով զինհոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել է:¹⁰³

Դեպքի առթիվ ՋԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնում հարուցված քրեական գործով ձեռնարկված մեծածավալ քննչական գործողությունների արդյունքում պարզվել է, որ Գ.Մեսրոպյանը կյանքի համար վտանգավոր հրազենային վնասվածքն ստացել է իր ուղղությամբ դիտավորյալ արձակված կրակոցի հետևանքով, բացահայտվել է առերևույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով հանդիսանում է 1997թ. ծնված, նույն գորամասի պարտադիր ժամկետային զինծառայող: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ զինծառայողին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:¹⁰⁴

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը դատաքննության փուլում գտնվելու մասին:

5. Արկադի Լևոնի Ղարիբյան

2017թ-ի հուլիսի 28-ին՝ ժամը 16:40-ի սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում հայտնաբերվել է 1984թ. ծնված, պայմանագրային զինծառայող, շարքային Արկադի Լևոնի Ղարիբյանի դին՝ գլխի շրջանում ստացած մահացու վնասվածքով:¹⁰⁵

Արկադի Ղարիբյանը Լոռու մարզի Քարկոփ գյուղից է, սոցիալապես անապահով ընտանիքից, ամուսնացած էր և ունի երեք անչափահաս երեխա:¹⁰⁶

ՀՀ 6-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ շարքային Արկադի Լևոնի Ղարիբյանի մահվան դեպքի առթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով:¹⁰⁷

¹⁰³ <http://investigative.am/news/view/gagik-mesropyan.html>

¹⁰⁴ <http://investigative.am/news/view/gagik-mesropyani-spanutyun-mexadrang.html>

¹⁰⁵ <http://www.mil.am/hy/news/4889>

¹⁰⁶ <http://www.tert.am/am/news/2017/07/29/soldier/2444398>

¹⁰⁷ <http://investigative.am/news/view/zinwr-mah.html>

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը նախաքննության փուլում գտնվելու մասին:

Դիտավորյալ

1. Վարդան Գրիգորյան

2017թ-ի օգոստոսի 17-ին մահացել է պայմանագրային զինծառայող, 1985թ. ծնված Վարդան Գրիգորյանը:

Վարդան Գրիգորյանը Տավուշի մարզի Ներքին Կարմիրադրյուր գյուղի բնակիչ էր:

ՀՀ ՔԿ ՋՔԳՎ վեցերորդ կայագրային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, պայմանագրային զինծառայողի մահվան հանգամանքները պարզելու համար:

2017թ. օգոստոսի 17-ին՝ ժամը 15.10-ին, ահագանգ է ստացվել առ այն, որ Ներքին Կարմիրադրյուր գյուղին պատկանող «Չնգի» կոչվող հանդամասում այրված ավտոմեքենա կա: Դեպքի վայրի զննությամբ Ներքին Կարմիրադրյուր-Պառավաքար ճանապարհի 4-րդ կմ-ին՝ ճանապարհի երթևեկելի մասից դեպի ձախ, հայտնաբերվել է ձորը զլորված «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան՝ ամբողջովին այրված, որի մեջ հայտնաբերվել է մոխրացած դիակ:

Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել, որ 32-ամյա ժամկետային զինծառայողը կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ է ստացել 2017թ. օգոստոսի 16-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, համազյուղացու՝ 37-ամյա տղամարդու հետ անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, որից հետո վերջինս նստեցրել է նրան նշված ավտոմեքենան, զլորել ձորը և այրել: 37-ամյա տղամարդը ձերբակալվել է:¹⁰⁸

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը նախաքննության փուլում գտնվելու մասին:

Ե. Առողջական խնդիրներ

1. Սարգիս Սամվելի Ափինյան

¹⁰⁸ <http://investigative.am/news/view/spanutyun-karmir-axbyur.html>

2017թ-ի հունվարի 26-ին ՊՆ N գորամասի տարածքում հանկարծամահ է եղել 1998թ-ին ծնված ժամկետային զինծառայող Սարգիս Մամվելի Ափինյանը:¹⁰⁹

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ կուրսանտ Սարգիս Ափինյանի մահվան հանգամանքները պարզելու համար:¹¹⁰

ՀՀ քննչական կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ նախնական տվյալներով՝ 26.01.2017 թվականին՝ ժամը 16:20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, կուրսանտ Սարգիս Ափինյանի ինքնազգացողությունը գորամասի շարահրապարակում կտրուկ վատացել է: Նա տեղափոխվել է գորամասի բուժկետ, որտեղ ժամը 17:35-ի սահմաններում վերջինիս մոտ գրանցվել է կենսաբանական մահ:

2017թ-ի հունվարի 27-ի նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ Սարգիս Ափինյանի մահը վրա է հասել «սուր սրտային անբավարարություն՝ չճշտված, թոքային այտուցի» հետևանքով:¹¹¹

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը նախաքննության փուլում գտնվելու մասին:

2. Արմեն Ծատուրյան

2017թ-ի ապրիլի 26-ին, ժամը 08:00-ի սահմաններում Նոր Նորքի 5-րդ զանգվածում, ավտոմեքենայում տղամարդու դի է հայտնաբերվել: ՀՀ Ոստիկանության մամուլի ծառայությունից Razm.info-ի հետ զրույցում հաստատնել են, որ մահացածը ՀՀ ՊՆ գորամասերից մեկի ինժեներական ծառայության պետ, 1986թ-ի ծնված, մայրը Արմեն Ծատուրյանն էր:

Արմեն Ծատուրյանը մահացել է աշխատանքի գնալու ճանապարհին՝ իր ավտոմեքենայում: Դեպքը գրանցվել է Նոր Նորքի 5-րդ զանգվածում՝ «Իդեալ» խանութի դիմաց: Արմեն Ծատուրյանը ծառայում էր ՀՀ ՊՆ Նուբարաշենի գորամասում՝ որպես ինժեներական ծառայության պետ:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ Արմեն Ծատուրյանը մահացել է սրտի կաթվածից:¹¹²

¹⁰⁹<http://www.mil.am/hy/news/4604>

¹¹⁰<http://www.azatutyun.am/a/28262347.html>

¹¹¹<http://investigative.am/news/view/sargis-apinyan.html>

Զինճառայողի մահվան դեպքի մասին որևէ այլ պաշտոնական հաղորդագրություն չկա:

3. Մայիս Գեղամյան

2017թ-ի հունիսի 6-ին կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում՝ ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդության հետևանքով մահացել է ժամկետային զինճառայող Մայիս Գեղամյանը:

Մայիս Գեղամյանը զինճառայության էր գորակոչվել Աշտարակի շրջանի Արուճ գյուղից 2013 թ.-ի հուլիսի 15-ին ԼՂՀ Մարտունի 2-ում: Ծառայության սկզբում Մայիս Գեղամյանը ընկել է թոփչք-վազքի ժամանակ, վերքը չի մշակվել, ինչի հետևանքով տեղում գոյացել էր սարկոմա: Չարորակ հիվանդության պատճառով աջ ոտքը հեռացրել են, սակայն քաղցկեղը ախտահարել է նաև թոքերը: Նա բազմաթիվ անգամ քիմիաթերապիա է ստացել: ¹¹³

Նախկին զինճառայողի մահվան դեպքի մասին որևէ պաշտոնական հաղորդագրություն չկա:

4. Նարեկ Զիվանի Մխիթարյան

2017թ-ի հունիսի 14-ին կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է ՀՀ ԶՈւ պայմանագրային զինճառայող, 1995թ-ին ծնված Նարեկ Զիվանի Մխիթարյանը: 2017թ-ի հունիսի 13-ին Նարեկ Մխիթարյանը ենթարկվել է պարանոցի միջային կիստայի վիրահատության, ինչից հետո եղել է դեպքը:

Նարեկ Մխիթարյանը Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքի բնակիչ էր, ամուսնացել էր 3 ամիս առաջ: ¹¹⁴

Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում տեղի ունեցած դեպքի իսկությունը հստատել է Արծրուն Հովհաննիսյանը՝ «Արմենպրես»-ի հետ ունեցած հեռախոսագրույցի ժամանակ: ¹¹⁵

¹¹²<http://razm.info/101093>

¹¹³<http://www.tert.am/am/news/2017/06/03/Mayis-geghamyan/2391816>

¹¹⁴<https://news.am/arm/news/395446.html>

Նարեկ Մխիթարյանի մահվան հանգամանքները պարզելու համար 4-րդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ:¹¹⁶

Ի պատասխան ՀՀ Քննչական կոմիտեին ուղարկված հարցման՝ ստացվել է տեղեկություն՝ գործը նախաքննության փուլում գտնվելու մասին:

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի 18 զինծառայող հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

¹¹⁵ <https://armenpress.am/arm/news/894929/muracani-hospitalum-paymanagrayin-zintsarayox-e-mahacel.html>

¹¹⁶ <http://investigative.am/news/view/zincarayox-narek-mxitaryan.html>